



ԵՂ/52714/02/22

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

21.11.2022 թ.

ք. Երևան

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Փիլոսյանը, ծանոթանալով <<ԷյՋ Վի Էյ Սի Սերվիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

<<ԷյՋ Վի Էյ Սի Սերվիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 10.10.2022 թվականին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Երևանի պետական համալսարան հիմնադրամի պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը և որպես հետևանք՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշումը վերացնելու պահանջի մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 19.10.2022 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է և կրկին ներկայացվել 16.11.2022 թվականին, որը դատավոր Ա. Փիլոսյանի աշխատակազմին է հանձնվել 17.11.2022 թվականին:

Ծանոթանալով հայցադիմումին և կից փաստաթղթերին՝ գտնում եմ, որ դրանք ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ, 234.6-րդ հոդվածներով նախատեսված պահանջներին համապատասխան, հետևաբար հայցադիմումը անհրաժեշտ է ընդունել վարույթ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.6--րդ, 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

<<ԷյՋ Վի Էյ Սի Սերվիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Երևանի պետական համալսարան հիմնադրամի պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը և որպես հետևանք՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշումը վերացնելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

Թիվ ԵՂ/52714/02/22 եզրափակիչ դատական ակտը ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել 03.01.2023 թվականին:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթարկվում է բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ



Ա. ՓԻԼՈՍՅԱՆ